

Էս ղդար փահլաման թաքեաւէր զայ արիր,
 Էսիկ աղջկայ ապով, ինդի Էսիկ աղջիկ որ սպանես,
 Բաս էլ մեր գալ գնալ ինչի խամար էր.
 Ասաց—քեռի չէ որ չէ օրթում եմ կերէ,
 Որ չը սպանեմ Էսիկ կը մեռնեմ:

Քեռին բերեց աղջկայ թուր զարկեց
 Դաւթի ձիան բերան կեամ երկթու տեղ.
 Դուրդն էլ կապեց ձիան պոչէն աղջկան էլ խեծցուց,
 Իւր ձին փախցու, աղջիկ խեծաւ ձին.

Չիու կեամ թողկեց աղջիկ Խանդութ փախաւ,
 Տղայ Դաւիթ ետեւ ընկաւ:

Ընկաւ իտե Դաւթի ձիի պոչէն կապած գուրդ,
 Գետին պատուելով գնում է,
 Էնօրէն էսօր Խանդութ Խանուժի երկրի անուն,
 Փոխեց սոքման աւան (Ճեղքուած քանդուած երկիր)
 Աղջիկ Խանդութ փախաւ, տղայ Դաւիթ ետեւ ըն-
 կաւ.

Աղջիկ առջևից, տղայ ետևից.
 Դաւիթ խասուխաս եր եղբր, Խանդութ մտաւ ներս,
 Իւր խասեր, թուր թալեց բերդի քար կիսեց,
 Օրթումը կոտրեց իջաւ ձիուց մտան ներս,
 Կերան խման, պառկան, քնան ուրախութէն ա-
 բեցին.

Ելան վերցրին Մսրը գնացին.
 Մսրում օխտն օր օխտ գիշեր խարսնիք էրեցին,
 Իրանց մուրազին խասին.
 Եսիկ էլ էկայ ձեզիկ խաբար բերեցի.
 Տղայ Դաւթի, աղջիկ Խանդութի Տէքեաթն արեցի:

«Ես Խիւս ուստա Դաւիթս, էսիկ խէքիաթ սորվեցի իմ խօրից, ուստա Ալլախվէրտուց, իմ խէրն էլ իմ պապ Վանցի ՕՏանէսից. Աստուած օղորմի նրանց խոգուն»:

Գրի առի Խ. Վ. Մակուայ ս. Թաղէոս Ա. Ուաքելոյ վանից առաջնորդարանում, ներկայու- թեամբ փանաչօր Եսայի վարդապետի,
 1895 ամի փետրուարի 23—27 օրերում:

Հէքիաթ ասող ուստա Դաւիթը մօտ 50 տա- ղեկան միջաճասակ և խելացի մարդ է. սրա պապ Յովհաննէս Վանից եկած է Սօճման աւանի Ղայնար գիւղը, զարուս սկզբներում, իսկ սրա որդի Ալլախվէրդին ս. Թաղէոս Առաքելոյ վանքի գիւղը փոխադրուելով ունեցել է ուստա Դաւիթին, որը ներկայումս աղրում է Ղարաքիլիսէ կամ Թա- ղէոս Առաքելոյ գիւղում:

Որովհետեւ Ղարաքիլիսէ կամ Թաղէոս Առա- քելոյ գիւղի 28 տուն ժողովրդականք հաւաքա- ծու են գանազան տեղերից այն է՝ Հայուձորցի, Ա- լաշկերացի, Կարնեցի, Խարակոնիսցի, Վանցի, Հախորկցի, Գուլասարցի, Կործոտցի, Մշեցի, Մա- կուցի և ըն որովք գտնուելով Խոյ և Մակու քա- ղաքների մէջտեղը՝ խօսուն բարբառները, վերին աստիճանի խառնուած ու շփոթ են. ո՛չ պարսկա-

հայի, ո՛չ Վանայ, ո՛չ Մշոյ և ո՛չ էլ Ալաշկերտի, այլ այս բոլորից մի խառնուրդ, որով և հէքիաթիս լեզուն մի նմուշ կարող է համարուել, թէև մեծ մասամբ Վանայ բարբառը հէքիաթի մէջ տիրողն է:

Հաւարչան որև Լրտաջ գաւառի մի մասը՝ հնումն անուանում էր Քիլիսէ, յետոյ փոխար- կուել է Սոքման աւան կոչումով: Նախքայժան կեադուկը, Խանդութ-Խանում Գայասին, Դաստա- կեարի Գեադուկը գտնուում են Սոքման աւանգ ա- լառում, իսկ Փէրա գիւղը Հեր—Խոյ գաւառում:

Սահմանակից Սոքման աւանի Քիլիսէ գիւղը, որի մօտ է և Խանդութ-Խանումի բերդը, ներկա- յումն բաղկացած է 20 տուն թուրք ազգաբնակու- թիւններից, Կռէսը բաղկացած է 30 տնից՝ թրքա- բնակ է. Փէրան գտնուում է Խոյից 2 1/2 ժամ հե- ուաւորութեան վերայ դէպի արևմուտք 800 տուն թուրք ազգաբնակութեամբ, միայն երկու տուն էլ հայ կայ: Ռուս—պարսկական պատերազմից առաջ բոլոր յիշատակեալ վայրերը բնակած են եղել հա- յեր, իսկ այժմ՝ աջամներ, պարսիկներ: Յայտնի քառատուն հազար գաղթականների մեծ մասը Մակ- ուից և Խոյից են գաղթել: (Հաւարչան և Հեր գաւառները Հայոց): Ներկայումս Հաւարչանի շատ թիւբքաբնակ գիւղերում, գերեզմանների, եկեղե- ցիների, վանքեր կանգուն են մնացած: Մանրամաս- նութիւններ տեսնել «Տեղեկագիր Մակուայ Հայոց» աշխատութեան մէջ:

Խ. Վ.

Վ Ե Ր Ջ.



Մ Ա Ն Բ Ա Ն Ի Ր Ք.

ՊԵՂՈՒՄՆԵՐ

Յայտնի Բուզանդիագէտ Փրանսիացի ակադեմիկոս Գուստաւ Ելումբերգէը «Journal de Debats»-ին յոյեմբերի-ի համարում նկարագրել է իւր այցելութիւնը հին Խոքսոնէս քաղաքի պեղումներին: Եօթը տարի առաջ հանգուցեալ Ա- լէքսանդր Գ. կայսեր հրամանով սկսուել է այդ հին յունական գաղութի պեղումն եւ այսօր արդէն քաղաքի յատակագիծն որոշ բացուել է: Դժբախտաբար քաղաքի մի մասը գտնուում է մի ոռա վանքի տակը, ուր արգելուած է պեղելը: Արդէն իսկ բաց են արած 15 եկեղեցի, որոնց մէջ եւ այն եկեղե- ցին, ուր մկրտուել է Ալադիմը: Պեղումները ղեկավարում է պ. Կոստիշկո ոռա հնագէտը, որ ամենայն ամիս հարուստ ժողովածուներ է ուղարկում Պետերբուրգ Երմիտաժի համար:

ՅԱՆՆՏԵՆԱԿԱՆ ՀՐԵՆ

Մինչեւ այսօր կարծու՛մ էր, որ յաւիտենական Թա- փառող հրեայի աւանդութիւնը միմիայն միջին Եւրոպայումէ գտնուում: վերջերս գտնուած ձեռագիրներից սակայն տեղե- կանում ենք, որ այդ հրէի մասին աւանդութիւններ են եղել եւ հարաւային Եւրոպայում, Դոալիայում, Սպանիայում եւ Պորտուգալիայում: Միջին Եւրոպական աւանդութիւնով այդ հրէի անուն էր իսահակ Լակեղեմացի կամ Ահասֆեր, իսկ իտալականի մէջ նա կոչուած է Բուտադէ, Բուտադիո, այս- ինքն՝ ծառայ Աստուծոյ: Ինչպէս ձեռագիրներն հաղորդում են, դրան տեսել են 1225 թւին Փլորինցիայում, ապա 1310ին 1520 եւ 1416 ին, այս վերջին թուականից մենք ունենք ա՛ կանատեսի վկայութիւնները Բուտադէօի մասին: Դոալական աւանդութեան համաձայն եւս դա այն հրեան է, որ Փրիչին աւատակել է, ուստի դատաւարտուած է Թափառելու երկրիս վերայ մինչեւ վերջին դատաստանը: Դոալացի ականատես-

ների պատմածից կարելի է եզրակացնել, որ Ռուսալէոյի անուամբ զանազան ժամանակներում օգտուել են ծարսիկ սըրիկաներ եւ իրենց ժամանակակիցներին մոտրազրել:

ՄԱՆԱԿԱՐԺԱԿԱՆ

— Խտակական կառավարութիւնը մեծ ուշադրութիւն է դարձնում մանկական պարտէզներէ կամ ծառայողներէ զարգացման վերայ: 1895 թուի վերջին Խտակայում կային 2,572 ծաղկոցներ, ուր յաճանում էին 502,734 մանկուկ: այդ ծաղկոցների ընդ որ ծախքն հասնում էր 6,540,909 Ֆրանկի, այսինքն, 2,620,000 ոտքով: այս դրամը հայթայթում է տէրութեան նպաստով, թողակադրամով եւ գաւառական հասարակական կանոնաւոր նպաստներով:

— Անգլիական ժողովրդական դպրոցները ուսուցիչներն 1895 - 1894 թուականների ընթացքում հետեւեալ ռոճիկներն էին ստանում: եկեղեցական դպրոցների աւագ ուսուցիչն ստանում էր 1,200 ոտքով, օգնականը — 740 ուսուցչուհին 740 ուսուցչուհին — 610 ուսուցչուհի Schools Board-ի ուսուցիչներն ստանում էին 1,600 եւ 1,050 ուսուցչուհի 1,450 եւ 810 ու:

— Եկեղեցի-դպրոցների դէմ է Ռուսաստանում Ռեֆիմի Թեմի առաջնորդ սրբազան Դիոնեսիոսը: աչքի առաջ ունենալով որ վերջին ժամանակներս ծախքերի թեթեւութեան համար Ռուսաստանում շատ տեղ եկեղեցու եւ դպրոցի համար մի շէնք է շինում, սրբազան Դիոնեսիոսը յայտնում է, որ անվայել է սրբութիւն սրբոցի առաջ թոյլ տալ որ աշակերտները կոռւն, վիժեն, հայոյն ենին:

ՊԱՏԺՈՒԱԾ ԲԱՐԵԳՈՐԾ

Ռուս քաղաքներն հաղորդում են, որ շուտով Պետերբուրգ պիտի քննուի մի շատ տարօրինակ գործ: Ետալէրգ ամուսինները մեղադրում են, որ առանց օրինական թղտուութեան ընկեցիկ որբերին ապաստանարան են տուել եւ կրթել իրենց տան մէջ: Ետալէրգը այդ որբերին գրել կարդալ, թուաքանութեան եւ երգեցողութիւն են ուսուցել առանց որ եւ նիւթական օգտի, ընդհակառակն իրենք են հոգացել այդ որբերի ասրուստը: Այս բարեգործ ամուսիններն այժմ պատասխանատու են ծանաղուած օրէնքի 1049 յօդուածով եւ պիտի դատաւարտուեն հաւանօրէն 200 ոտքով տուգանքի:

ԺՈՂԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

Աւիքները փոթորիկ ժամանակ հանգստացնելու համար ցարդ գործ էին դնում ձէթը, որ մեծ քանակութեամբ անում էին ջրի վերայ, որով աւիքները շատ շէնք բարձրանում: այժմ մի աւելի դիւրին եւ ամանագին միջոց է գտնուել: Հընարուած է մի լայնածաւալ ուղկամածե ցանց, ոց փոթորիկ ժամանակ տարածում են նախ շրջապատի ջրերի վերայ, այս ցանցն արգելում է աւիքներին բարձրանալ եւ նաւը խորտակել:



Ա Ջ Գ Ա Յ Ի Ն

ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ .

Ամոյս Գ-ին Ս. Էմիանի Մայր տաճարում հանդիսաւոր մաղթանք կատարուեցաւ ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ ՆԻԿՈՒԱՅ ԱԼԷԲՍԱՆԻ ԳՐՈՎԶԻ անուանակոչութեան աթիւ: Ահաւասիկ նորին Վեհափառութեան հեռազրի պատասխանն է շնորհաւորական հեռագիրը:

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ
պատասխանը.

Յարսկ. Սե. 7 դեկտեմբ. 42 ժ. 47 ր. զննե կէսգիշերի
Է.Ջ.ՄԻԱԾԻՆ.

ԿԱԹՈՒԼԻԿՈՍԻՆ

Ա Մ Ե Ն Ա Յ Ն Հ Ա Յ Ո Ց .

Ի սրտէ շնորհակալ եմ վասն մատուցեալ Ինձ շնորհաւորութեանց եւ բարեմաղթութեանց Ձերոց:

ՆԻԿՈՒԱՅ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ.
ՅԱՐՄԱՅՈՒՅ ՍԵԼՈ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ

ԹԱԳԱՆՈՐ ԿԱՅՍԵՐ.

Ի մեծի աւուրս Եւուանակոչութեան Ձերդ Կայսերական Մեծութեան ջերմազինս աղօթելով վասն թանկալին կենաց Ձերոց, զամ մատուցանել Ձեզ, Եմենաբարեպաշտ Արքայ, յիմէ, ի հոգեւորականութեան եւ հօտին իմոյ կողմանէ զսրտեւանիւն շնորհաւորութիւնս հոգեբուղիս բարեմաղթութեամբը:

ԽԿՐՏԻՉ ԿԱԹՈՒԼԻԿՈՍ Ա.Մ.Ե.Ա.Յ.Ն ՀԱՅՈՑ.

6 դեկտեմբ. 1895.

Ի Ռ Ո Ւ Ս Ա Հ Ա Յ Ք

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄ.

Թեմիս եկեղեցական—ճիսական դպրոցների տեսուչ նշանակուեցաւ Ս. Էջմիածնի միաբաններից Արժանապատիւ Մեարոյ վարդապետ Տէր Մովսիսեանը:

Հ. Տ Ա Ճ Կ Ա Հ Ա Յ Ք .

Տաճկական Հայաստանի բոլոր գաւառներում կատարուած կոտորածների, աւարառութիւնների եւ զաղանութիւնների մասին սկսան զեկուցագրեր տեղալ Հայրապետական Գիւանք, Նոյեմբերի 20-ից մինչև դեկտեմբերի 20 զեկուցումներ են ստացուել Կոստանդնուպոլսից, Տրապիզոնից, Երզնայից, Կարինից, Մուշից, Վանից, Սեբաստիայից, Գլորիից եւ Կիլիկիայից, Այդ վաւերաթղթերն այնպիսի սոսկալի փաստեր են ամփոփում իրենց մէջ, որ անհարին է դրանցից իւրաքանչիւրն մինչև ցվերը կարգալ մարդկային այդպիսի դադանութիւններ լսելու համար պէտք է պողովատէ նեարդեր ունենալ, Սրբապղծութեանց մասին պատմուած դէպքերն անօրինակ են ամբողջ պատմութեան մէջ, աւերուած ու այրուած են եկեղեցիք եւ հին ուխտատեղիք, պատուտած ս. Գրքերը, սրբութիւն սրբոց անարգուած . . . կոտորուածներից աւելի արգաշատելի են կենդանի մնացածները, որոնցից կըլել են ամեն ինչ եւ այսօր ցուրան ու սովը շարունակում են աւարտել սկսուած ջնջումն հայ քրիստոնէութեան, Այսպիսի թշուառութեան ժամանակ միայն հանրամարդկային օգնութիւնը կարող է փրկարար լինել եւ ինչպէս լրադիրներն հաղորդում են, Աստուած շարժել է մինչև իսկ հեռաւոր Ամերիկացիների գութը թշուառ հայերի վրայ եւ նրանց